

Հայկական ակնաբուժության Նախագիծ
Լույս հայի աչքերին



the armenian eyecare project
bringing sight to armenian eyes



ԳԼԱՌԻԿՈՄԱ

Գլաուկոման վտանգավոր հիվանդություն է, որի դեպքում վնասվում է տեսողական նյարդը: Դրա հետևանքով տեսողական ապոակներն աչքից չեն ուղարկվում ուղեղ, ինչը հանգեցնում է կուրության, եթե չի ավստորոշվում և բուժվում: Հիվանդների մեծ մասի դեպքում բարձր ճնշմամբ աչքում տեսողական նյարդը վնասվում է: Գլաուկոման կարող է վարգանալ մեկ կամ երկու աչքում:

Հիվանդությունը սկզբնական շրջանում անախտանիշ է, ինչի պատճառով այն դառնում է առավել վտանգավոր՝ պահանջելով պարբերական ստուգումներ վաղ և բուժման ենթակա փուլերում: Առանց ավստորոշման և բուժման ավստահարվում է տեսողությունը, որը հանգեցնում է կուրության:


Գլաուկոմայի ռիսկային խմբում են

- 40 տարեկանից բարձր մարդիկ
- Ընտանիքում գլաուկոմայի դեպքեր ունեցած մարդիկ
- Կարճատեսություն ունեցողները
- Շաքարախտով (դիաբետով) հիվանդները
- Բարձր արյան ճնշումով (հիպերտոնիայով) հիվանդները
- Նախկինում աչքի վնասվածք ստացած, աչքի վիրահատություն կամ աչքի բորբոքում ունեցած մարդիկ
- Ստերոիդներ օգտագործողները
- Միգրենի գլխացավ և ծայրամասային անոթային սպալմ ունեցողները
- Քնելիս շնչառական խնդիր ունեցողները
- Տղամարդիկ

Ախտանշանները

Բացանկյուն գլաուկոմայի դեպքում, որն ամենատարածված ձևն է, սկսվում ախտանշանները բացակայում են: Բացանկյուն գլաուկոման ժառանգականության գործոն ունի, և հիվանդության

հավանականությունը բարձրանում է, եթե ծնողներից կամ տատիկ-պապիկներից որևէ մեկը գլաուկոմա ունի: Բացանկյուն գլաուկոման հիվանդության քրոնիկ տեսակն է, որը դանդաղ առաջացնում է տեսողության կորուստ: Երբեմն հիվանդությունն այնքան դանդաղ է պարզանում, որ հիվանդն անգամ չի գիտակցում այն: Տեսողությունը նորմալ է, ցավեր չկան: Սակայն, հիվանդության պարզացմանը չուզահեռ, հիվանդը նկատում է կողքերից տեսողության աստիճանական վատթարացում: Առջևում գտնվող առարկաները հստակ են երևում, իսկ տեսադաշտի ծայրամասերում գտնվողները՝ ոչ, ինչպես խողովակի անցքից նայելիս: Հիվանդության խորացման հետ տեսադաշտը նեղանում է և առաջացնում կուրություն: Փականկյուն գլաուկոմայի դեպքում նկատվում է ներակնային ճնշման կտրուկ աճ: Ախտանշաններն են աչքի կարմրությունը, աղոտ տեսողությունը, ինչպես նաև մեկ աչքում՝ հոնքի շրջանում, ուժեղ ցավը,



նորմալ տեսողություն




գլաուկոմա

գլխացավը, սրտխառնոցը և փսխումը, ծիածանագույն շրջանակների հայտնվելը լույսի աղբյուրի շուրջը: Սա բժշկական շտապօգնություն պահանջող վիճակ է, և բուժման բացակայության դեպքում աչքը կարող է կուրանալ մեկ կամ երկու օրվա ընթացքում: Մեկ աչքում փականկյուն գլաուկոմայի սուր նոպայի դեպքում նույն հիվանդության հավանականությունը կա նաև մյուս աչքում: Ակնաբույժը բուժման միջոցով կարող է կանխարգելել նույն մյուս աչքում:



Ախտորոշում

Գլաուկոման ախտորոշելու միակ տարբերակը աչքի մանրակրկիտ վննումն է, որը ներառում է ներակնային ճնշման չափում, տեսադաշտի ստուգում և ակնահատակի տեսողական նյարդի ստուգում:



Բուժում

Գլաուկոման բուժվում է ներակնային ճնշման իջեցմամբ: Բուժման եղանակը կախված է գլաուկոմայի տեսակից:

Բացանկյուն գլաուկոմա

Բացանկյուն գլաուկոմայի բուժման համար, ամենայն հավանականությամբ, կպահանջվեն աչքի մի քանի տեսակի կաթիլներ: Եթե դրանք բավարար չեն, ապա անհրաժեշտ է լրացուցիչ միջամտություն:

Լազերային բուժում. լազերի օգնությամբ բացվում են ծորանները, որոնց միջոցով կատարվում է հեղուկի արտահոսք:

Վիրահատություն. Եթե կաթիլները և լազերային միջամտությունն անարդյունավետ են, վիրահատության ընթացքում ստեղծվում է հեղուկի արտահոսքի նոր ճանապարհ, ինչը նպաստում է ճնշման իջեցմանը:

Իմպլանտ. վերջերս ստեղծվել են նոր իմպլանտներ, որոնք օգնում են բուժել գլաուկոման կատարակտի հեռացման համար անհրաժեշտ վիրահատության ընթացքում:

Փականկյուն գլաուկոմա

Փականկյուն գլաուկոման բժշկական շտապօգնություն պահանջող իրավիճակ է, քանի որ չբուժվելու դեպքում աչքը կարող է մի քանի օրվա ընթացքում կուրանալ: Աչքի ճնշումն իջեցնելու համար անհրաժեշտ են աչքի կաթիլներ, հաբեր, ներերակային ներարկումներ: Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում իրականացնել նաև իրիդեկտոմիա կոչվող վիրահատություն, որի ընթացքում լազերի օգնությամբ ծիածանաթաղանթում նոր անցք է բացվում: Երբեմն դա իրականացվում է վիրահատության միջոցով առանց լազերային միջամտության: Նոր անցքի շնորհիվ նույն Նահանջում է, և կանխվում է հաջորդի հավանականությունը: Առողջ աչքում նույնպիսի առաջացման հավանականությունը կանխելու նպատակով կատարվում է լազերային միջամտություն:

Հեռանկարային սպասելիքներ

Բացանկյուն գլաուկոման չի բուժվում: Այնուամենայնիվ, դրա վարգացումը կարելի է կառավարել և պահպանել տեսողությունը՝ հետևելով բժշկի անխտիր բոլոր ցուցումներին:

Փականկյուն գլաուկոման հրատապ բուժօգնություն է պահանջում: Տեսողությունը պահպանելու համար պահանջվում է անհետաձգելի բուժում: **Անմիջապես դիմե՛ք բժշկի աչքի սուր ցավի կամ տեսողության կտրուկ կորստի դեպքում.** դրանք կարող են փականկյուն գլաուկոմայի ապդանշաններ լինել:

Կանխարգելում

Բացանկյուն գլաուկոման հնարավոր չէ կանխարգելել, քանի որ հիվանդների մեծամասնության պարագայում ախտանշանները բացակայում են: Սակայն տեսողության կորուստը հնարավոր է կանխել համակողմանի ակնային վնևման միջոցով, որը կնպաստի բացանկյուն գլաուկոմայի վաղ ախտորոշմանը և, համեմատաբար, հեշտ բուժմանը:



Բոլորը պետք է համակողմանի ակնային վնևում անցնեն 40 տարեկան հասակում: Եթե գլաուկոմայի ռիսկային խմբում եք, ապա պետք է համակողմանի ակնային վնևում անցնեք 40 տարեկանից շուտ և պարբերաբար ստուգվեք ակնաբույժի կողմից:

Փականկյուն գլաուկոմայի վարգացման վտանգի դեպքում (այն հայտնաբերվում է աչքի հատուկ հետապոստոթյամբ՝ գոնիոսկոպի միջոցով) ակնաբույժը կառաջարկի լավերային բուժում՝ ՅԱԳ ծայրամասային իրիդեկտոմիա: Լավերի օգնությամբ ծիածանաթաղանթում փոքր անցք է բացվում, ինչը կանխարգելում է տեսողության կորուստ առաջացնող փականկյուն գլաուկոմայի նոպան: